ԿԱՐԾԻՔ

Արտաշես Խալաթյանի՝ ԺԲ.00.01 – «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված՝ «Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» ատենախոսության վերաբերյալ

Արտաշես Խալաթյանի «Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» ատենախոսության թեման խիստ արդիական է: Ատենախոսը կատարել է ընդգրկուն աշխատանք՝ ուսումնասիրելով Հայաստանի Երրորդ Հանրապետությունում սահմանադրորեն ամրագրված և փաստացի գործող կառավարման ձևերը, վեր հանելով այս կամ այն կառավարման ձևի ընտրության հիմքում ընկած պատմական-քաղաքական գործոնները, ցույց տալով քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոնների ազդեցությունը պետական կառավարման ամրագրված ձևի շրջանակներում պետաիշխանական համակարգի իրական վիճակի և պետական կառավարման տարբեր մարմինների ու ինստիտուտների միջև առկա փոխհարաբերությունների վրա: Արժեքավոր է ատենախոսի կողմից որդեգրած մոտեցումը՝ ամփոփ և համապարփակ կերպով ներկայացնելու պետական կառավարման առկա ձևի պատմական էվոլյուցիան և անցած ուղով պայմանավորված լինելու հանգամանքը, ինչը աշխատությանը հաղորդում է միջոլորտային բնույթ և թույլ է տալիս իմաստավորել սահմանադրական ինստիտուտների իրավական և պատմական-քաղաքական ասպեկտների փոխկապվածությունը:

Աշխատանքի հետ կապված դիտարկումները ներկայացված են ստորև:

1. Աշխատության մեջ բազմիցս արծարծված է այն միտքը, որ կառավարման ձևի էվոլյուցիան, առանձնահատկությունները, «միսն ու արյունը» հնարավոր չէ հասկանալ ու դրա մասին դատողություններ անել միայն սահմանադրական տեքստերի հիման վրա, ու որ հավասարապես կարևոր են սոցիալ-տնտեսական գործոնները, քաղաքական մշակույթը, հասարակության իրավագիտակցությունը: Հեղինակի գիտական հետազոտությունը նպատակ ունի հայեցակարգային հիմքեր ստեղծել հասարակական իրավագիտակցության բարձրացման և առկա ու հետագա սոցիալ-իրավական և քաղաքական զարգացումներն ավելի կանխատեսելի

դարձնելու...համար (էջ 6): Այդուհանդերձ, հեղինակի եզրակացությունները և առաջարկները հիմնականում վերաբերում են նորմատիվ դաշտին՝ սահմանադրական ինստիտուտներին և Սահմանադրության կամ օրենքների տեքստին կամ առնվազն տեսանելի չէ, թե ինչպիսի կապ է տեսնում հեղինակը նշված բարեփոխումների և հասարակության իրավագիտակցության բարձրացման և սահմանադրական մշակույթի ձևավորման միջև:

2. Ատենախոսության ներածության մեջ և առաջին գլխում ատենախոսը երբեմն փոխարինելիության սկզբունքով օգտագործում է պետաիշխանական համակարգ, կառավարման համակարգ, կառավարման համակարգի մոդել հասկացությունները: Թեև հասկանալի է, որ հետազոտության խնդիր չէ նշված հասկացությունների պարզաբանումը, սահմանումը կամ հստակեցումը, նախընտրելի կլիներ, որ հեղինակը կիրառեր մեկ հասկացություն՝ երևույթը նկարագրելու համար, կամ բացատրեր այլ հասկացության կիրառման համատեքստը՝ շփոթից խուսափելու համար:

3. Աշխատությունում երբեմն հանդիպում են դիտարկումներ, որոնք հեղինակինն են և չեն հղում որևէ այլ աղբյուրի, բայց միևնույն ժամանակ ձևակերպված են որպես փաստ: Օրինակ, հեղինակը նշում է. «Հայաստանի Երրորդ Հանրապետության միակուսակցական-ամբողջատիրական քաղաքական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ հասարակության կենսագոյի վրա նախկին քաղաքական ռեժիմի ազդեցությունը շարունակվում էր՝ ելնելով մասնավորապես, նրանից, որ Հանրապետությունում մեծ խնդիր էր գտնել նոր քաղաքական և իրավական ինստիտուտների գործառումն ապահովելուն ունակ քաղաքական գործիչներ և մասնագետներ, որոնք ընդգրկված չլինեին խորհրդային բռնապետական համակարգի ինստիտուտներում» (էջ 18), կամ որ «2018թ. հեղափոխությունը՝ որպես բռնապետական քաղաքական ռեժիմից ժողովրդավարական քաղաքական ռեժիմի անցման գործընթաց, տեղավորվեց սահմանադրականության շրջանակում...» (էջ 96): Կարելի է բերել այլ նման օրինակներ: Նախընտրելի կլիներ տեսնել հեղինակի կողմից արտահայտված տեսակետի հիմնավորումը, կամ որևէ աղբյուրի հղումը, կամ հստակ ձևակերպում այն մասին, որ միտքը հանդիսանում է ատենախոսի կարծիք:

4. Ատենախոսության տարբեր հատվածներում հեղինակն արտահայտում է որոշակիորեն հակասական մտքեր: Այսպես, 96-րդ էջում հեղինակը

փաստում է, որ 2018թ. հեղափոխությունը տեղավորվեց սահմանադրական շրջանակում՝ շնորհից խորհրդարանական կառավարման ձևի դրական հատկանիշների՝ այդ թվում՝ անձնիշխանության ինսիտուցիոնալ հենքի բացակայության, քաղաքական իշխանության հավակնորդների միջև իշխանական լծակների բաշխման համամասնության ապահովվածության, ինչի արդյունքում էլ հեղափոխության սկզբնական շրջանում հնարավոր դարձավ իշխող քաղաքական էլիտայի և անմիջական ժողովրդավարության կարգով լեգիտիմացված կոնտրէլիտայի ինստիտուցիոնալ համակեցությունը մինչև 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունները: Աշխատության 182-րդ էջում, ընդհակառակը, հեղինակը խոսում է Սահմանադրության հակաճգնաժամային գործիքների սղության և խորհրդարանի՝ առանց մեծամասության գործելու և քաղաքական որոշումների կայացման ողջ մեխանիզմի վտանգված լինելու մասին, որոնց պայմաններում, կարծում եմ, դժվար թե հնարավոր լիներ ինստիտուցիոնալ համակեցություն:

Մեկ այլ օրինակ է հեղինակի դիտարկումը այն մասին, որ արտաքին վտանգների, սոցիալ-տնտեսական ճգնաժամերի և այլ նմանատիպ ազդեցություն ունեցող գործոնների պայմաններում օբյեկտիվորեն մեծանում են անձնիշխանության ձևավորման սոցիալ-քաղաքական հիմքերը, իսկ անձնիշխանությունը, դատելով հեղինակի հետագա վերլուծությունից, արմատավորվելով քաղաքական մշակույթի մեջ սկսում է բացասական ազդեցություն ունենալ ժողովրդավարացման գործընթացների և պետական կառավարման ձևերում իշխանությունների հակակշռի ոչ միայն սահմանադրական ամրագրման, այլև սահմանադրական մշակույթում դրսևորման վրա: Միևնույն ժամանակ, հեղինակն առաջարկում է բարձրացնել վարչապետի ընտրության հարցում ժողովրդի անմիջական դերակատարությունը (ենթագլուխ 2.3, էջեր 161-166): Հարց է առաջանում՝ որքանով արդարացված է նման առաջարկը, եթե սահմանդրությունների դրույթների ոչ բավարար կենսագործման, իսկ երբեմն այլախեղման հիմքում հենց հեղինակի կարծիքով էլ ընկած է եղել ժողովրդից անմիջական լեգիտիմություն ստացող երկու մարմինների՝ պառլամենտի և նախագահի առկայությունը, ու արդյոք նման առաջարկը անձնիշխանության ավանդույթի շարունակության ռիսկ չի պարունակում:

Հիշատակված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը. ատենախոսությունն ունի տեսական-պատմական արժեք և բավարար աղբյուրագիտական հիմք: Ատենախոսությունը՝ կատարված առաջարկների առումով, ունի նաև գործնական արժեք և կարող է օգտագործվել

սահմանադրական հետագա բարեփոխումների գործընթացում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

«Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» ատենախոսությունը բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի դոցենտ,
իրավ.գիտ.թեկն. Վ. Օհանյան

24.09.24թ.

Իրավ. գիտ. թեկն., դոցենտ Վ.Ա. Օհանյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ Ա. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ
FACULITY OF LAW